



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Թիւ 20061

Դեկտեմբեր 11, 1967

Գերաշնորհ
Տ. Կազգէն Եպս. Գրպրըսլեան
Նախագահ Խնամակալութեան
Ս. Աստուածածին Մատուռի
Ելպըրօն՝

Սիրելի Արքայան,

Թեմական Խորհուրդի 5 Դեկտեմբեր 1967 նիստին մէջ նկատի առինք
Հայց. Եկեղեց. Երիտ. Կազմակերպութեան Կեդրոնական Խորհուրդի խնդրան-
քը Ելպըրօնի Ս. Աստուածածին մատուռի շէնքը գործածելի դարձնելու
համար Համագումարի եւ երիտասարդաց հաւաքայթներու:

Որոշեցինք որ դուք, Յովհաննէս Արկ. Գապարեան եւ Հայց. Եկեղեց./
Երիտ. Կազմակերպութեան Կեդրոնական Խորհուրդէն անդամ մը քննէք կարե-
լիութիւնները, նորոգութեանց ծախքերը եւ տեղեկագիր մը ներկայացնէք
մեզ:

Հաճեցէք հաղորդակցիլ Յովհաննէս Սարկաւազի եւ Կեդրոնական Խոր-
հուրդի հետ եւ այս մասին անհրաժեշտը տնօրինել:

Սիրոյ արշունիւ
Torkom Manougian
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ս. Աստուածածին Մատուռ

Էլպրոն.

Նիւ Ճըրզի

Յոյեմբեր 18, 1967

Գերաշնորհ

Տ. Քորզում Սպս. Մանուկեան

Քարեխնամ Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի

Նիւ Սորթ.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Էլպրոնի Ս. Աստուածածին Մատրան Խնամակալութիւնը ամսոյս 10ին ժողով մը Գոլմարեց Առաջնորդարանի մէջ Խնամակալներու հինգի ներկայութեամբ եւ Նախագահութեամբ Առաջնորդի Փոխանորդ Գերշ. Տ. Վազգէն Սպս. Գըպրըսլեանի եւ Նկատի առաւ Էլպրոնի Մատրան եւ Էզպըրի փարքի շրջանի Համայնքի կա-
ցութիւնը:

Նրկու ժամ թեր ու դէմ կարծիքներ յայտնուելէ վերջ, որոշեց խնդրել ձերդ սրբազնութենէն որ համիք ժողով մը ունենալ Խնամակալութեանս հետ, կամ կարգադրէք որ թեմական Խորհուրդի մէկ ժողովին ներկայ ըլլան Խնամակալութեանս ներկայացուցիչները Էլպրոնի մատրան եւ Էզպըրի փարքի շրջանի հայերու որպէս ծուխ կազմակերպման կապակցութեամբ:

Ար խորհիւք թէ որպէս Խնամակալներ, որքան ասեմ որ պաշտօնի վրայ ենք, մենք ալ մեր ըսելիքը կրնանք ունենալ Էզպըրի փարքի ժողովուրդի մասին վերջնական որոշում մը առէ առաջ:

Յուսով ենք որ մեր խնդրանքը լսելի պիտի ըլլայ եւ մեր ձեր հետ ունենաց տեսակցութիւնը իր օգտակար դերը պիտի խաղայ:

Ձեր Ս. Աջը համբուրող

Վազգէն Սպս, Գըպրըսլեան
Նախագահ

Խաչատուր Խանգէտեան
Ատենադպիր

Տօքթ. Աշոտ Գրիգորեան
Ատենապետ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Թիւ 19140

Օգոստոս 10, 1967

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Ծ. Վրդ. Գրգորսլեան
Առաջնորդի Փոխանորդ
Նիւ Եորք:

Սիրելի Հայր Վազգէն,

Նկատի առնելով թեմական խորհուրդի 1967 Յուլիս 28ի նիստին մէջ տրուած որոշումը՝ ի մասին Ազգային Փարթի շրջանի Հայ հաւատացեալները իբրեւ համայնք կազմակերպելու, Ձեզի պաշտօն կը յանձնենք քննելու էլ պըրօնի Ա. Աստուածածին մատուռին շուրջ ստեղծուած գործունէութիւնը, եւ նոր ծրագիր մը կազմելու աւելի կազմակերպչական հիմունքներու վրայ դնելու համար այդ շրջանակի հայութեան հաւաքական կեանքը:

Ձեզ ընհանուր պատասխանատու կը նշանակենք, եւ կ'ակնկալենք որ ստեղծէք անհրաժեշտ մարմինները եւ կազմակերպութիւնները Ազգային Փարթի հայութիւնը համայնքի վերածելու համար, եւ տեղեկագրէք մեզի պարբերաբար:

Սիրոյ ոգով Նիւ Եորք

ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Առաջնորդ

Bishop Corkum Manougian, Primate

Թիւ 20042

Դեկտեմբեր 4, 1967

Գերաշնորհ

Տ. Վազգէն Եպո. Գրպրըսլեան

Մախագահ Ս. Աստուածածին Մատուռի Խնամակալութեան

էկպրոսն.

Սիրելի Սրբազան,

Ստացած ենք 13 նոյեմբեր 1967 թուակիր Ձեր նամակը: Եթէ Խնամակալութեանը ներկայացուցիչները կարենան այս կարճ ազդարարութեան վրայ ներկայանալ Թեմական Խորհուրդի ժողովին, հաճեցէք զանոնք նշանակել եւ հրահրել Առաջնորդարան Դեկտեմբեր 5, 1967, Երեքշաբթի յետ միջօրէի ժամը 2ին, խորհրդակցելու համար Ձեր հարցերու մասին Թեմական Խորհուրդի նիստին մէջ:

Այլապէս մեզի լուր տուէք եւ Ձեզ կը հրահրենք Թեմական Խորհուրդի յաջորդ նիստին:

Սիրոյ ոգովնիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՏԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

★

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Ք.Լ. 20195

Յուլիուս 26, 1968

Բարեջանք
Լեւոն Արկ. Հէթիմեան
Էլպրոն.

Սիրելի Լեւոն Արկաւագ,

Մտածել Զեզի որ անցեալ Օգոստոսին պաշտօն յանձնած էինք Առաջ-
նորդի Փոխանորդ Գեր. Տ. Վազգէն Եպս. Գաբրելեանին զբազիլ Էլպրոնի
Ս. Աստուածածին Մատուռի շուրջ տեղեւորած Համայնքային կեանքով եւ
կազմակերպութեամբ:

Ներքակ Զեզի կը ղրկենք պատէ՛նը Յուլիուս 23, 1968 թուակիր
մեր նամակին, ուղղուած Գեր. Տ. Վազգէն Եպս. Գաբրելեանին, որուն
պաշտօն յանձնած ենք գլխաւորելու Ս. Աստուածածին Մատուռի Խմամակա-
լութեան ժողովները եւ զործունէութիւնը:

Այս առիթով կը յայտնենք մեր եւ թեմական խորհուրդի զնահատանքը
ցարզ Զեր կատարած աշխատանքներուն համար ի պայծառութիւն Էլպրոնի Ս.
Աստուածածին Մատուռին: Հակառակ Զեր յառաջացեալ տարիքին Զեր ցուցա-
բերած ետանք եւ հետաքրքրութիւնը հանդէպ այն պարտականութեանը որոնք
զրուած էին Զեր ուսերուն վրայ, զԶեզ կը կացուցանեն արժանի զնահատանքի:
Հասակ ենք թէ դուք եւս Զեր հոգեկան բաւարարութիւնը եւ զհոգեւակութիւնը
զզայած էք Զեր ծառայութեան մէջ:

Կը մաղթենք որ Աստուած զօրացնէ զԶեզ հոգիով եւ մարմնով շարու-
նակելու համար Զեր ծառայութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ եւ Աս-
տուծոյ փառքին համար:

Սիրոյ ոգշուելու

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

★

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Ք.Լ. 20195

ՅուՆուար 26, 1968

Բարեջանք
Լեւոն Արկ. Հէթիմեան
Էլպրոն.

Սիրելի Լեւոն Սարկաւազ,

Ծանօթ է Ձեզի որ անցեալ Օգոստոսին պաշտօն յանձնած էինք Առաջ-
նորդի Փոխանորդ Գեր. Տ. Վազգէն Եպս. Գաբրելեանին զբաղիլ Էլպրոնի
Ս. Աստուածածին Մատուռի շուրջ ստեղծուած Համայնքային կեանքով եւ
կազմակերպութեամբ:

Ներքակ Ձեզի կը գրկենք պատէէնը Յունուար 23, 1968 թուակիր
մեր նամակին, ուղղուած Գեր. Տ. Վազգէն Եպս. Գաբրելեանին, որուն
պաշտօն յանձնած ենք զլիաւորելու Ս. Աստուածածին Մատուռի Խմբակա-
լութեան ժողովները եւ գործունէութիւնը:

Այս առիթով կը յայտնենք մեր եւ Թեմական Խորհուրդի գնահատանքը
քարզ Ձեր կատարած աշխատանքներուն համար ի պայծառութիւն Էլպրոնի Ս.
Աստուածածին Մատուռին: Լակաւալ Ձեր յառաջացեալ տարիքին Ձեր ցուցա-
բերած եասնը եւ հետաքրքրութիւնը հանդէպ այն պարտականութեանը որոնք
դրուած էին Ձեր ուսերուն վրայ, զՁեզ կը կացուցանեն արժանի գնահատանքի:
Հստակ ենք թէ դուք եւս Ձեր հոգեկան բաւարարութիւնը եւ գոհունակութիւնը
զգացած էք Ձեր ծառայութեան մէջ:

Կը մաղթենք որ Աստուած զօրացնէ զՁեզ հոգիով եւ մարմնով շարու-
նակելու համար Ձեր ծառայութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ եւ Աս-
տուծոյ փառքին համար:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Քիւ 20278
Փետրուար 23, 1968

Շիրազնոբ
Տ. Կազմէն Եպս. Գրպրոսլեան
Նախագահել գրոնի Ս. Աստուածածին Ստանոի
Խմամակալ Սարմնի
Երև. Երբ.

Սիրելի Սրբազան,

Առայժմ ենք Խմամակալութեանդ Առնապետին եւ Առնապալիրին ստորագրութեամբ 22 Յունուար 1968 թուակիր նամակը, որով կը խնդրուէր Լեւոն Սրի. Կէրիմեանը Ներկայացնել «Եւրոպա Հայրապետին» որ նա էր կարգին շնորհէր անոր պարգևը ըստ արժանւոյն»:

Ասյն նամակը յետոյ պիտի տանենք Թեմական Խորհուրդի Նիստին մէջ, եւ կը յուսանք որ Թեմական Խորհուրդը ըստ արժանւոյն Հարկ եղան կարգադրութիւնը կը կատարէ:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԿՈՄ ԵՊԻՍԿՈՑՈՍ
Առաջնորդ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Bishop Corkom Manougian, Primate

Թիւ 20172


Յուլի 22, 1968

Գերաշնորհ
Տ. Վարդէն Եպոս. Գրպրբսլեան
Նախագահ Խնամակալութեան
Ս. Աստուածածին Մատուռի
Էլպրբոն:

Սիրելի Արքեպսկոպոս,

Ներքակ Ձեզի կը գրկենք Թեննիսլայի Ս. Թովմաս Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժանաշնորհ Տ. Առնակ ԲՏՆՅ. Գասպարեանի ուղղուած Յուլի 22, 1968 թուակիր մեր նամակը, Նիւ Ճրրզիի մէջ ընդունելութեան օր մը նշանակելով Վեհափառ Հայրապետի մեր Թեմին տալիք այցելութեան առիթով:

Կը յանձնարարենք որ ընթացք տաք սոյն կարգադրութեան:

Սիրոյ ոգով

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵԳԻՍԿՈՂՈՍ ՄԱՆՈՒԿԱՆ

Առաջնորդ

Bishop Sarkis Amougian, Primate

Թի. 20169

Յունուար 22, 1968

Արժանաշնորհ
Տե. Աննակ ԲՀՆյ. Գառաբեան
Հոգևոր Հովիւ Ս. Թովմա Եկեղեցւոյ
եւ Նախագահ Միակն Խորհուրդի
Թեմեմէլայի

Սիրելի Տէր Աննակ,

Թեմական Խորհուրդի նիստին մէջ նկատի առնելով Ձեր խնդրանքը՝
Վեհափառ Հայրապետի մեր թեմին առէիք այցելութեան առիթով որ մը
յառաջանելու նիւ ձեր գործի շրջանին մէջ բնակող մեր ժողովուրդին,
ընդունելու համար Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը Թեմեմէլայի
Ս. Թովմա Եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Ներկայիս միակ կարելի թուականը Մայիս 7, 1968, Երեւանի
օրն է զոր յառաջացինք վերադառնալ նպատակին: Ուստի, Ձեզի պար-
տականութիւն կը յանձնենք ժողովի հրաւիրելու նիւ ձեր գործի մեր
եկեղեցիներու Հոգևոր Հովիւները եւ Միակն Խորհուրդները, կազ-
մելու համար անհրաժեշտ յանձնախումբը եւ կատարելու կարգադրու-
թիւններ Վեհափառի այցելութեան կապակցութեամբ:

Հանկէք Ձեր աշխատանքին մանրամասնութիւնները մեզի հա-
ղորդել:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵԳԻՍԿՈՂՈՍ

Առաջնորդ



Diocese of the Armenian Church of America

ԱՐՄԱՆՈՐԳՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՍՈՍ ԲԱՆՈՒԿԱՆ

Առաջնորդ

Bishop Torkom Manougiian, Primate

Թիւ 20169

Յունուար 22, 1968

Արժանաշնորհ
Տ՛. Առնակ ԲՀՆՅ. Գասպարեան
Հոգևոր Հովիւ Ս. Թովմաս Եկեղեցւոյ
եւ Միազակ Միական Խորհուրդի
Թեննիլայ՝

Սիրելի Տէր Առնակ,

Թեմական Խորհուրդի նիստին մէջ նկատի առինք Ձեր խնդրանքը՝
Վեհափառ Հայրապետի մեր թեմին առկա այցելութեան առիթով օր մը
յատկացնելու նիւ ձեր գրի շրջանին մէջ բնակող մեր ժողովուրդին,
ընդունելու համար Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը Թեննիլայի
Ս. Թովմաս Եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Ներկայիս միակ կարելի թուականը Մայիս 7, 1968, Երեւանի
օրն է զոր յատկացուցինք վերադառնալ նպատակին: Աւստի, Ձեզի պար-
տականութիւն կը յանձնենք ժողովի հրաւիրելու նիւ ձեր գրի մեր
եկեղեցիներու Հոգևոր Հովիւները եւ Միական Խորհուրդները, կազ-
մելու համար անհրաժեշտ յանձնարումքը եւ կատարելու կարգադրու-
թիւնները Վեհափառ այցելութեան կապակցութեամբ:

Հաճեցէք Ձեր աշխատանքին մանրամասնութիւնները մեզի հա-
ղարգել:

Սիրոյ ողջունելու

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՍՈՍ

Առաջնորդ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Bishop Torhom Manougian, Primate

Թիւ 20186

Յունուար 23, 1968

Գերաշնորհ

Տ. Վազգէն Եպս. Գրպրոսլեան

Նախագահ Խնամակալութեան

Ս. Աստուածածին Մատուռի

Ելպերօն:

Սիրելի Սրբազան,

Թեմական Խորհուրդի նիստին մէջ Ս. Աստուածածին Մատուռի Խնամակալութեան անդամներու հետ խորհրդակցութիւն ունենալէ յետոյ, հետեւեալ կէտերը կը յանձնենք Ձեր եւ Խնամակալութեան անդամներու ուշադրութեան:—

1. Խնամակալութեան անդամները նշանակուած ըլլալով Առաջնորդին կողմէ, ենթակայ են ուղղակի Առաջնորդին:
2. Ձեզ նշանակած ենք Նախագահ Խնամակալութեան, մեր անունով գլխաւորելու համար Խնամակալութեան ժողովները եւ գործունէութիւնը:
3. Լեւոն Սրկ. Հէքիմեան որ անցնող տարիներուն իր օգտակար գործունէութիւնը ունեցած է եւ իւրովսանն ծառայեց իբրեւ մատակարար, ազատ կ'արձակուի այդ պատասխանատուութենէ: Դուք եւ Խնամակալութիւնը ներկայ պայմաններուն համաձայն կը ճշդէք պարտականութիւնները Լեւոն Սարկաւազի, որ ենթակայ պիտի ըլլայ Ձեր կարգադրութեանց:
4. Խնամակալութիւնը իր ժողովները պէտք է գումարէ Ձեր գիտութեամբ եւ նախագահութեամբ, եւ հաւատարմօրէն պէտք է հետեւի մեր թեմի Կանոնադրութեան:
5. Ձեզի պարտականութիւն յանձնած ենք նաեւ Ազպրի Փարբի շրջանի մէջ բնակող հայ ընտանիքները կազմակերպել, ստեղծելով եկեղեցական մարմիններ, որպէս զի նոյն շրջանակի հայութիւնը կարենանք համայնքի մը վերածել երբ պայմանները լրացուին:
6. Եթէ յարմար գտնէք, կարող էք յաւելեալ անուններ առաջարկել մեզի համայնքին մէջ բնակող անձերու, զանոնք եւս նշանակելու համար Խնամակալութեան իբրեւ անդամ:

Կը մաղթենք որ Ձեր եւ Խնամակալութեան շնքերը արդիւնաւորուին եւ Ազպրի Փարբի շրջանակին մէջ բնակող մեր ժողովուրդը կարենայ ունենալ կազմակերպեալ համայնքային կեանք մը:

Սիրոյ յղուելով

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Թիւ 20278

Ֆետրուար 23, 1968

Գերաշնորհ
Տ. Վազգէն Եպս. Գրպրըսլեան
Նախագահ էլպրոնի Ս. Աստուածածին Մատուռի
Խնամակալ Մարմնի
Նիւ Եորք.

Սիրելի Արքայան,

Ստացած ենք խնամակալութեանդ Ատենապետին եւ Ատենադպիրին ստորագրութեամբ 22 Յունուար 1968 թուակիր նամակը, որով կը խնդրուէր չեւոն Սրկ. Հէքիմեանը ներկայացնել Վեհափառ Հայրապետին "որ նա իր կարգին շնորհէր անոր պարգեւը ըստ արժանւոյն":

Սոյն նամակը նկատի պիտի առնենք թեմական Խորհուրդի նիստին մէջ, եւ կը յուսանք որ թեմական Խորհուրդը ըստ արժանւոյն հարկ եղած կարգադրութիւնը կը կատարէ:

Սիրոյ ողջունիւ
Torkom Manougian
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Յուլիս 9. 1969

Մեծայարգ
Տօթ. Արթիւր Միսեան,
Կարիշ Կոմիտաս Երգչահուների,
Աստ.

Զարգելի Տօթ. Միսեան,

Երջանէ մը ի վեր Կոմիտաս Երգչահուները իսկած է Էլպրոսի Հայց. Ծկե-
ղեցին ըլլալ Ս. Աստուածածինի Կամ Կերափոխման օրը ինզեպէս մեծաթուով
տեղւոյն եւ ուխտաւոր ժողովուրդը:

Օրագիր կայ որ այս տարի եւս Կերափոխման օրը, Օգոստոս 17ին,
Հանդիսաւոր Գառարագ մատուցուի եւ ապա բացօդեայ մաշկերոյթ սարրուի
Իսլաւացեալներու իսկար: Կոմիտաս Երգչահուների ներկայութիւնը եւ անոնց
Ս. Գառարագի երգեցողութիւնը մեծ փայլ պիտի տայ կատարուելիք ծրագրին:
Հեռեւարար կը հնդրենք որ Կոմիտաս Երգչահուները Օգոստոս 17ի գառարագը
երգէ Էլպրոսի Ս. Աստուածածին մատրան մէջ ի մեծաթուութիւն իսլաւացելոց:
Մենք ալ կը ծրագրենք Ս. Գառարագը մատուցանել: Ս. Գառարագի վերջաւորութեան
խողողօրհներ ալ պիտի կատարուի:

ԾՅէ վարչութիւնը կը իսծի այս հնդրանքը նկատի առնել եւ դրական
պատասխան տալ, իսնեցէք իմացնել Գր. Արմէն Գիւլպիւլեանը որու իսսցէն կը
գտնէք ստորեւ:

Յուսով ենք որ արգելք մը չկայ որ բոլորիս ծրագիրները իրագործուին
ու Կոմիտաս Երգչահուները երգէ Ս. Գառարագը Էլպրոսի Ս. Աստուածածին
մատրան մէջ Օգոստոս 17ին:

Սիրոյ ողջումիւ

Վազգէն Ծկս. Օհանեան

Նախագահ

Էլպրոսի Ս. Աստուածածին Նախակալութեան

The Gomidas Choir

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ե Ր Գ Չ Ա Խ Ո Ի Մ Բ
Առաջնորդարան Հայոց Ամերիկայի

Գերաշնորհ

Տէր Վազգեն Սրբազան Օհանիեան

Ստացանք Ձեր Յուլիս 9, 1969 թուակիր նամակը ուր
Կոմիտաս Երզնթումբս կը հրաւիրուեր ելալըօնի Սրբ. Աստուա-
ծածին եկեղեցւոյ մէջ բազմազայն երգելու Վերափոխման տօնին
առթիւ:

Վարչութիւնս իր Յուլիս 34 թուակիր նիստին միաձայնու-
թեամբ որոշեց այդ օրուայ Սրբ. Պատարագի բազմաձայն երգեցողու-
թեանց եւ ապա տեղի ունենալիք բացօդեայ ճաշկերոյթին մասնակցիլ:

Մնամք որդիական ակնածանօք

Վարչութիւն Կոմիտաս Երզնթումբի

Ատենադպիր

Փ. Ատենապէտ

Արթուր Բուլբուլեան

Տէր. Արթուր Բուլբուլեան

c.c: Mr. Armenag Bulbulian
76 Werah Place
Ocean Port, N.J. 07757

Copied MA



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Bishop Corkom Manoogian, Primate

Յուլիս 16, 1968

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Ս. Արքեպս. Մանուկեան,
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի,
նիւ Եորք.

Գերաշնորհ Սրբազան հայր,

Էզպըրի Փարքի շրջանի Հայց. Եկեղեցւոյ նորակազմ Խնամակալութիւնը
իր առաջին նիստը գումարեց ամսոյս 15ի գիշերը եւ դիւանը ընտրեց ըստ
հետեւեալին. -

Ատենապետ. - Գր. Արմենակ Պիւլպիւլեան

76 Werah Place,
Ocean Port, N.J.

Phone 229-2568

Ատենադպիր. - Գր. Յարութիւն Նարկիզ

1103 Bendermere Avenue,
Wanamassa, N.J. 07712

Phone 531-3701

Գանձապահ. - Գր. Տիգրան Պահատուրեան

125 Harrow Ct.
Neptune, N.J. 07753

Զայտսիկ հաղորդելով ձերդ սրբազնութեան մասմ

Աղօթակից
Վազգէն Եպս. Գրպրըսլեան
Նախագահ
Էզպըրի Փարքի շրջանի
Խնամակալութիւն



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԹՈՐԿՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016 * MURRAY HILL 6-0710

Archbishop Toros Manougian, Primate

Յուլիս 18, 1969

Գերաշնորհ
Տ. Վազգէն Եպս. Օհանեան
Հոգատար Էլպրոնի Ս.Աստուածածին Մատուռի
նիւ Եորք.

Սիրելի Սրբազան,

Ինչպէս տեղեակ էք դուք եւ եկեղեցւոյդ պատգամաւորները, 67րդ Տարեկան
Թեմական Պատգամաւորական Ժողովը, 1969 տարեշրջանի համար Առաջնորդարանիս
պիւտճէին մէջ որոշ յաւելում մը ըրաւ վիճակիս համայնքներու թեմական
տուրքին վրայ: Ըստ այս որոշման եւ թեմական Խորհուրդի մէջ տրուած որոշ-
ման համաձայն, 9 առ հարիւր յաւելում պիտի կրեն թեմական տուրքերը, եւ
եկեղեցւոյդ բաժինը պիտի ըլլայ 261.00 տուար:

Վստահ ենք որ սիրով պիտի գործակիցիք Առաջնորդարանիս՝ կատարելով հա-
մայնքիդ պարտականութիւնը եւ կանոնաւոր վճարելով ձեր թեմական տուրք եւ
այլ զօթաները, ինչպէս ըրած էք անցեալին մէջ զնահատելի կերպով:

Սիրոյ ղղձով
Archbishop Toros Manougian
ԹՈՐԿՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՍ
Առաջնորդ

Քիւ 22906
Մարտ 16, 1971

Արժանաշնորհ
Տ. Կրթանէս ԲՆՅ. Քալայճեան
Նախագահ ժիական Խորհուրդի
Ս. Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ
Էլպոն, Մ. Ճ.

Սիրելի Տէր Կրթանէս,

Էլպոնի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ժիական Խորհուրդին հետ խորհրդակցարար ըշղեցինք թէ Լեւոն Արկ. Հէրիմեան ինչ պատասխանատուութիւններ պէտք է ստանձնէ Էլպոնի եկեղեցւոյ մէջ, նկատի առնելով համայնքին ներկայ կազմակերպական կացութիւնը:

Իբրեւ մասակարար Սարկաւազ ինչ կրնայ ընել ձեր բացակայութեան առնել եկեղեցւոյ խորանի, զգեստուց եւ սպասուց մարրութեան, ապահով պահպանման, ժիական ժողովի նիստերուն մասնակցելու (ոչ քուէարկելու իրաւունքով, բացի երբ Անդամական ժողովէն ընտրուի իբրեւ թեկնածու ժիական Խորհուրդի), ձեր բացակայութեան առնել ժողովներու բացումը եւ փակումը ազօթքով կատարելու, եւ զանազան կարգադրութիւններ կատարելու ձեր եւ ժիական Խորհուրդի որոշումներուն համաձայն, եւ այլ օգտակար ծառայութեան սեւակէտով:

Համեցէք սոյն ըշղումները կատարել եւ մեզի հաղորդել առաջին առիթով:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԿՈՒՄ ԱՐԵՆԿԻՍՏՈՐՈՍ
Առաջնորդ

Քիւ 28751
Նոյեմբեր 8, 1972

Բարեջնոր
Լեւոն Սրկ. Հէթիմեան
Էլպրոն, Ն. Ճ.

Սիրելի Լեւոն Սարկաւազ,

Քեմական Խորհուրդի նիստին մէջ նկատի առինք Էլպրոնի Իովուատու-
նէն Ձեր փոխադրուելու պարագան եւ որոշեցինք որ դուք փոխադրուիք
եկեղեցւոյ շէնքին երկրորդ յարկը, Իմամայն այն զբաւոր պայմաննե-
րուն որոնց մասին դուք եւ Ծխական Խորհուրդը տեղեակ էք:

Համեցէք Էլպրոնի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Իոզեւոր Իովիւ Տ.
Վրթանէս Զինյ. Գալայժեանի եւ Ծխական Խորհուրդին Իեա կարգադրել
որ առաջին առիթով փոխադրուիք եւ Իովուատունը արամադրուի ըլլայ
կիրակնօրեայ վարժարանի գործածութեան Իամար:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐԶԵՎԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Քիւ 28751
Նոյեմբեր 8, 1972

Բարեջնորհ
Լեւոն Սրկ. Հէքիմեան
Էլպրոն, Ն. Ճ.

Սիրելի Լեւոն Սարկաւազ,

Թեմական Խորհուրդի նիստին մէջ նկատի առինք Էլպրոնի հովուաւանդ-
ներն Ձեր փոխադրուելու պարագան եւ որոշեցինք որ դուք փոխադրուիք
եկեղեցւոյ շէնքին երկրորդ յարկը, համաձայն այն գրաւոր պայմաննե-
րուն որոնց մասին դուք եւ Ծխական Խորհուրդը տեղեակ էք:

Հաճեցէք Էլպրոնի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ.
Կրթանէս Զհնյ. Գալայժեանի եւ Ծխական Խորհուրդին հետ կարգադրել
որ առաջին առիթով փոխադրուիք եւ հովուաւանդներ արամադրելի ըլլալ
կիրականօրեայ վարժարանի գործածութեան համար:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՂԻՍԿՈՒԳՈՍ
Առաջնորդ

Մայիս 7, 1978

Մեծայարգ
Տիար Յակոբ Ալեքսանեան
Ազգրիի Փարբ.

Սիրելի Գրն. Ալեքսանեան,

Ստացած եմ Մայիս մէկ թուակիր 2եր նամակը, որով կը փափաքիք տեղեկութիւն ունենալ կանոնադրական կէտի մը մասին: Թեմական պատգամաւոր մը, կը հարցնէք, իրաւունք ունի նոյն ատեն ատենապետն ըլլալու ծիական Խորհուրդին կամ հակադրարար:

Թեմական Կանոնադրութիւնը չարգիւել որ մէկը ատենապետ եւ նոյն ատեն պատգամաւոր ըլլայ: Կան թեմին մէջ շատ պատգամաւորներ որոնք են նաեւ ծիական Խորհուրդի ատենապետներ:

Եւլաղրելի է որ ծանօթանաք Թեմական Կանոնադրութեան յօդուածներուն որպէսզի մաքերուն մէջ շփոթութիւն չգոյացուի:

Խորին յարգանք

Սուրէն Սանուէլեան

Քիւ 24508
Մարտ 18, 1975

Արժանաշնորհ
Տ. Վրթանէս ԲՏՆյ. Գալայճեան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Էլպրոն, Ն.Ճ.

Սիրելի Տէր Վրթանէս,

Ստացած ենք Մարտ 10, 1975 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար 16ին գումարուած համայն-
քիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի հինգ անդա-
մոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը
խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաթօնագիրը:

Այսու կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները,
ըստ ստորեւ տրուած ցանկին: Իսկ ժիական ժողովի ասենագրութեան մասին
տոանձին նամակով պիտի յայտնենք մեր թելադրութիւնը:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ժիական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԶԵԳԻՍԿՈՂԱՍ
Առաջնորդ

Սարգիս Տատուրեան
Գարգել Էլեան
Տիկ. Արաքսի Կորպորի
Տոքթ. Աննա Յարութիւնեան
Ճան Գայսէթեան

Մայիս 18, 1975

Բարեջնորհ
Լեւոն Սրկ. Հէքիմեան
Էլպրոն, Ն.Ճ.

Բարշ. Լեւոն Սարկաւազ,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է 1974 տարուան ընթացքին-
էլպրոնի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ եւ հովուաւան համար ձեր
կատարած անհրաժեշտ նորոգութեանց եւ այլ աշխատանքներուն ցան-
կը, ինչպէս նաեւ ձեր կողմէ առնուած երկու լուսանկարները, ո-
րոնց համար կը յայտնէ իր շնորհակալութիւնը:

Այս առթիւ, Նորին Սրբազնութիւնը կը փափար իր գնահատան-
քը յայտնել ձեզի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ եւ հովուաւան բա-
րեգարդման համար ձեր մատուցած օգտակար ծառայութեանց համար,
եւ ձեզի կը մաղթէ առաւել ուժ ու կարողութիւն՝ որպէս զի կա-
րենար նոյն եռանդով շարունակել եկեղեցանուէր ձեր գործունե-
ութիւնը:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝

Նուպար Բիւֆէլեան
Քարտուղար

Թիւ 24570
Յունիս 5, 1975

Մեծայարգ
Տիար Ալեք Մանուկեան
Նսիազահ Զ.Ք.Ը.Միութեան
Տիֆրոյթ.

Ձարգելի Տիար Ա. Մանուկեան,

Ստացած ենք Ապրիլ 29, 1975 թուակիր ձեր նամակը եւ ներ-
փակեալ նիւ ճորդիի Եզզորի Փարսի շրջանը բնակող ազգայինի
մը նամակին պատճէնը:

Անձնապէս հետաքրքրուեցանք ձեր նամակին մէջ յիշուած հար-
ցով, եւ յիշեալ շրջանին մէջ Եկեղեցւոյ եւ Քարեզործականի
համագործակցութեան դէմ անուած բայլ մը կամ արարք մը չնը-
կառնցինք "անբասանուած" եկեղեցականին կողմէ:

Այս անշուքեամբ Եւզորնի համայնքի հոգեւոր հովիւ Արժշ.
Տ. Վրթանէս Տհնյ. Գալայնեանի կողմէ ստացած ենք բացատրական
նամակ մը, որուն պատճէնը կը ներփակենք:

Վստահ ենք որ այս նամակին բովանդակութիւնը ձեզ եւս պի-
տի գոհացնէ:

Ձեզի եւ ձեր ազնիւ օրկնոջ կը մաղթենք հոգիի ու մարմնի
ստողութիւն եւ ձեր ազգանուէր բազմարդիւն գործունէութեան
ստաւել յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՇԵԳԻՍՏԱՆԳՈՍ
Առաջնորդ

Քիւ 24994
Նոյեմբեր 19, 1976

Բարեշնորհ
Լեւոն Սրկ. Հերիմեան
Էլզբրոն.

Սիրելի Լեւոն Սարկաւազ,

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ժիական Խորհուրդի ասենապետը մեզի գրած Նոյ. 11, 1976 թուակիր նամակին մէջ ներփակած էր նաեւ ձեզի ուղղուած Հոկտ. 31 թուակիր նամակին օրինակը:

Նամակին մէջ արծարծուած հարցի մասին Քեմական Խորհուրդի որոշումը հետեւեալն է. - Առժամայ հովիւ Գերշ. Տ. Բարգէն Եպս. Վարժապետեանի կամ ուրիշ հոգեւորականի մը բնակութեան համար Եկեղեցւոյ երկրորդ յարկին վրայ պէտք է յատկացուի մասնաւոր սենեակ մը: Եւ այս կարգադրութիւնը պէտք է ըլլայ շուտով՝ որպէս զի բնակարանը պատրաստ ըլլայ հոգեւորականի գործածութեան համար:

Գաշածն յանձնած ենք Քեմական Խորհուրդի անդամներէն ժորժ Մերենեանին եւ Ժիական Խորհուրդի Ասենապետ Յարութ Գարագաշեանին գործադրելու Քեմական Խորհուրդի որոշումը:

Ի տեղեկութիւն կը հաղորդենք ձեզի այս որոշումը, նոյն ասնն հրահանգելով որ համակերպիք կատարուելիք կարգադրութեանց:

Սիրոյ ողջունիւ

ՅՈՐԳՈՍ ԱՐԵՆԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Օրինակ՝ ժորժ Մերենեանի
Յարութ Գարագաշեանի

Քիւ 25002

Նոյեմբեր 24, 1976

Գերաշնորհ
Տ. Արսէն Եգս. Գերպերեան
Գիւանապետ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Սուրբ Էջմիածին.

Սիրելի Արսէն Սրբազան,

Առաջած ենք Նոյ. 4, 1976 թուակիր ձեր նամակը: Երբ Ս. Էջմիածին կը գտնուէինք Վեհափառ Հայրապետին ընթանացի կարգ մը լուսաբանութիւններ առինք Հլպրոնի համայնքի մասին:

Սիրելի չէ գրաւոր կերպով մինչեւ անգամ ամփոփ լուսաբանութիւն ալ Հլպրոնի համայնքէն Ներս պատահած անցուղարձերուն մասին: Առաջնորդարանի թեմական Խորհուրդը մօտէն հետաքրքրուեցաւ եւ նկատի առաւ հարցերը եւ առաւ իրի որոշումները՝ որոնք ներկայացուեցան նաեւ թեմական Գաղափարական Ժողովին, անցեալ Մայիսին: Այդ մասին թեմական Ժողովի որոշումը հաճեցէք գրանել 74րդ Տարեկան թեմական Գաղափարական Ժողովի Աւենագրութեան մէջ՝ էջ 5 եւ 6:

Թեմական Խորհուրդը որոշած է այլեւս չզբաղիլ ձեր յիշած գրութիւններով՝ քանի որ համայնքը օրինաւոր ընթացքով իր ներքին եկեղեցական թեմանք կը ջանայ բարելաւել: Դժբախտաբար դժգոհներու այդ խումբին մէջ կային անձեր որոնք փորձեցին մերժել Առաջնորդին եւ թեմական Խորհուրդին հեղինակութիւնը համայնքին վրայ եւ սպառնալիք ըրին մինչեւ պետական դատարան դիմել իրենց կարծեցեալ իրաւունքը պաշտպանելու համար:

Յառաջիկայ Շնորհաւարին համայնքը իր անդամական ժողովը պիտի գումարէ եւ ըստ թեմական Կանոնադրութեան պիտի ընտրէ ծխական Խորհուրդ մը՝ որ պիտի վաւերացուի Առաջնորդին եւ թեմական Խորհուրդին կողմէ:

Յոյս ունինք որ այս կանոնադրութիւնը Նոր միջադէպերով պիտի շինազարուի: Նորին Սրբութիւնը տեղեակ կը պահենք եթէ Նոր քարոզութիւններ աւելունքին համայնքին մէջ:

Սիրոյ ողջունել

ՔՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԵՆՈՐՈՍ
Առաջնորդ

Քիւ 25034

Գնկեմքեր 17, 1976

Մեծայարգ
Տիար Յարութիւն Գարագաշեան
Ատենապա Ս. Աստուածածին եկեղեցւոյ
ժպական Խորհուրդի
Ելաբրոն,

Յարգելի Տիար Գարագաշեան,

Աստուորդարանիս թմական Խորհուրդը իր վերջին նիստին մ.թ նը-
կատի առաւ Նոյ. 18, 1976 թուակիր ձեր նամակը ու համաձայն գրա-
նուցաւ որ Նոյեմբեր 20, 1977ին գումարէք համայնքիդ արեւկան
անդամակն ձողովը:

Այս առիւ կը փափայիք ունենալ հասնեալ անդակութիւնները
ու ընել կարգ մը յանձնարարութիւններ.

- Որքա՞ն է արատու անդամ մը գանձուած արեւատրքը.
- Հաննցէք զրկել անուանացանկը արատու ու բուկարկուել իրա-
ւունք ունեցող անդամներուն՝ նշելով թէ որո՞նք իրենց արեւկան
ատրքը վճարած են 1976 Յունիս 13էն առաջ.
- Կը յանձնարարենք ուշադիր ըլլալ որ իւրաքանչիւր բուկարկող
անդամ իր արեւկան ատրքը վճարած ըլլայ բուկարկութեան թուակա-
նէն վնց ամիս առաջ, ըստ թեմական կանոնադրութեան սրբազորութեան.
- Կը յանձնարարենք ուշադիր ըլլալ որ որեւէ պաշտօնի համար
թեկնածու կամ ընտրելի անդամ իր արեւատրքը վճարած ըլլայ ըն-
տրութեան թուականէն արի մը առաջ:

Վերոյիշեալները կը հաղորդենք առ ի գործադրութիւն:

Տօնական օրերու լաւագոյն մաղթանքներով,

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՍ ԱՐԵՎԻՍՏԱՆՈՐՈՍ
Առաջնորդ

Քիւ 25084
Գեկտեմբեր 17, 1976

Մեծայարգ
Տիար Յարութիւն Գարագաշեան
Ասենապետ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
ժխական Խորհուրդի
Էլպորոն,

Յարգելի Տիար Գարագաշեան,

Առաջնորդարանիս Քեմական Խորհուրդը իր վերջին նիստին մէջ նը-
կառի առաւ Նոյ. 18, 1976 թուակիր ձեր նամակը եւ համաձայն գրա-
նուեցաւ որ Փետրուար 20, 1977ին գումարէք համայնքիդ տարեկան
անդամական ժողովը:

Այս առթիւ կը փափաքինք ունենալ հետեւեալ տեղեկութիւնները
եւ ընել կարգ մը յանձնարարութիւններ.

- Որքա՞ն է արատու անդամէ մը զանձուած տարւտուրքը.
- Համեցէք զրկել անուանացանկը արատու եւ բուէարկելու իրա-
ւունք ունեցող անդամներուն՝ նշելով թէ որո՞նք իրենց տարեկան
տուրքը վճարած են 1976 Յունիս 18էն առաջ.
- Կը յանձնարարենք ուշադիր ըլլալ որ իւրաքանչիւր բուէարկող
անդամ իր տարեկան տուրքը վճարած ըլլայ բուէարկութեան թուակա-
նէն վնց ամիս առաջ, ըստ թեմական կանոնադրութեան տրամադրութեան.
- Կը յանձնարարենք ուշադիր ըլլալ որ որեւէ պաշտօնի համար
թեկնածու կամ ընտրելի անդամ իր տարետուրքը վճարած ըլլայ ընա-
րութեան թուականէն տարի մը առաջ:

Վերոյիշեալները կը հաղորդենք առ ի գործադրութիւն:

Տօնական օրերու լաւագոյն մաղթանքներով,

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐԷՅԳԻՍԿՈՐՈՍ
Առաջնորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Մարտ 10, 1977

**Մեծայարգ
Տիրա Յարութիւն Պարագաշեան
Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Ժխական Խորհուրդի Ասենապետ
Էլպրոն.**

Յարգելի Տիրա Պարագաշեան,

Ներկայիս կը տեղեկացնեմ Ձեզի թէ թեմիս բարեխնամ Առաջնորդ, Գերշ. Տ. Քորգոմ Սրբ. Արք. Մանուկեան, յանձնարարած է ինծի սոյն նամակը գրել եւ յայտնել հետեւեալը:

Որոշուած է որ այս տարի, Ռոնլուայի արարողութեան, մեծագոյն նիւ Եորքի եւ նիւ Ճորձիի մեր բոլոր եկեղեցիներու ժխական Խորհուրդներէն մէկական անդամ ներկայ ըլլան Ս. Վարդան Մայր Տաճարիս մէջ որպէս զի արարողութեան ժամանակ Ս. Խորան բարձրանան եւ Սրբազան արարողապետը իրենց ոտքը լուայ, Աւետարանական օրինակին համաձայն:

Ուստի, կը խնդրենք որ ժխական Խորհուրդիդ ժողովին մէջ նկատի առնէք այս պարագան եւ որոշելէ ետք, բարեհաճիք տեղեկացնել մեզ անունը այն յարգելի հոգաբարձուին որը պիտի մասնակցի յիշեալ արարողութեան:

Սպասելով Ձեր շուտափոյթ պատասխանին եւ մաղթելով Ձեր եկեղեցանուէր ու ազգօգուտ գործերուն յաջողութիւն,

Տիրաւանդ ողջունիւ սիրոյ
Աղօթարար

Զաւէն Եպս. Չինչինեան
Լուսարարապետ՝ Ս. Վարդան Մայր Տաճարի

Քիւ 25200

Մարտ 18, 1977

**Մեծայարգ
Տիար Ծարուֆին Գարագաշեան
Ս. Ասազւածափին Եկեղեցւոյ
ժիական Խորհուրդի Ասենազեա
Էլզբրոն.**

Յարգելի Տիար Գարագաշեան,

Առաջած ենք Էլզբրոնի համայնքի ժիական Անդամական ժողովի ասենազրութիւնը, որուն կազակցութեամբ երկու ֆորցեր կը փափարինք յանձներ ձեր ուշադրութեան.

1. Համաձայն ասենազրութեան՝ ժիական Անդամական ժողովի Ասենազեա Տիար ձան Թելիփանեան փոխ-ասենազեա նշանակած է Տիար Ծարուֆին Գարագաշեանը: Անդամական ժողովի մը ասենազեաը իրաւասու չէ փոխ-ասենազեա նշանակելու. իսկ Տիար Գարագաշեան, որ ժիական Խորհուրդի Ասենազեան է, չի կրնար Անդամական ժողովի Դիւանի անդամ նշանակուիլ կամ ընտրուիլ:

2. Քեմական պազամաւորի անձնափոխանորդի ընտրութիւնը կատարուած չէ ըստ Քեմական Կանոնադրութեան արամադրութեան, եւ այդ պատճառաւ չենք կրնար հաստատել այդ ընտրութիւնը: Նման ընտրութիւններ պէտք է կատարուին կրկանուան ցանկի մը վրայէն եւ զազանի քուէարկութեամբ: Ուրեմն, կը հրահանգենք որ Քեմական պազամաւորի անձնափոխանորդի ընտրութեան համար երկրորդ Անդամական ժողովի մը հրահանգէ համայնքի պատու անդամները եւ ընտրութիւնը կատարէ համաձայն Քեմական Կանոնադրութեան:

Քայս կը հաղորդենք առ ի զործադրութիւն:

Սիրոյ ողջուելի

**ՅՈՐԳՈՄ ԱՐՔԵՆՅԱԿՈՂՈՍ
Առաջնորդ**



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Մայիս 31, 1977

**Մեծայարգ
Տիար Յարութ Գարագաշեան
մ. Աստվածածին Եկեղեցւոյ
Սիական Խորհուրդի Ասենապետ
Էլպըրոն.**

Յարգելի Տիար Գարագաշեան,

Նորոգ հանգուցեալ Հայկ Գավուրճեան 102 տարեկան պիտի ըլլար այս տար-
ւան Օգոստոսին: Ետըջ քառասունըփինգ տարիներ յօգուտ իր ազգին եւ եկեղե-
ցիին կատարած իր դրական ծրագրումներուն, սրտեռանդն ջանքերուն եւ իրագոր-
ծումներուն ամենէն գեղեցիկ կոթողը պիտի մնայ Մայր Տաճարի, Մշակութային
Կեդրոնի եւ Առաջնորդարանի համալիրի կառուցումը նիւ Եորք քաղաքի սրտին
վրայ:

Լուսահոգի Հայկ Գավուրճեան իր կեանքի մինչեւ վերջին պահը մտածեց եւ
աշխատեցաւ կերպն ու միջոցը գտնել Մայր Տաճարի պարտուց բարձման: Այս մեծ
բարերարին շունչը դժբախտաբար յանկարծ սպառեցաւ, առանց լրացնել կարենալու
իր այդ առաջադրութիւնը:

Իր մեկնումով ձգուած այս խոշոր բացը կամրջելու համար Առաջնորդարանէն
ներս նոր ծրագրումներով զբաղեցան Հայկ Գավուրճեանի անձն ու ոգին յարատեւ
վառ պահելու նախանձախնդիր բարեկամներ: Անոնք, յետ լուրջ խորհրդածութեան,
յառաջացուցին Կեդրոնական Գործադիր Մարմին մը, որուն կազմի անդամներն են.

- | | |
|---------------------------|---------------------|
| Տիար Տատուր Տատուրեան | Ատենապետ |
| Տիար Սուրէն Ֆէսմեան | Գանձապահ |
| Տիար Եղուարդ Պաշեան | Բ. Գանձապահ |
| Տ. Գառնիկ Բհնյ. Հալլամեան | Քարտուղար |
| Տ. Աննակ Բհնյ. Գասպարեան | Բ. Քարտուղար |
| Տիար Իիչըրտ Գ. Կրէկըրի | Օրինական Խորհրդատու |

Կեդրոնական Գործադիր Մարմինը կազմեց Հայկ Գավուրճեանի ոգեկոչման կար-
գացոյց մը, որուն գործադրութեան ընթացք պիտի տրուի սոյն թուականէն մին-
չեւ Օգոստոս 20, որ ծննդեան թուականն է ողբացեալ Հայկ Գավուրճեանի:

Յանձնախումբի նպատակն է ապահովել 102 անձեր որոնք տրամադիր ըլլան իւրաքանչիւրը 1000 --մէկ հազար-- տուար նուիրել, եւ զանել 1000 անձեր որոնցմէ իւրաքանչիւրը 102 --հարիւր երկու-- տուար յանձն առնէ նուիրել Հայկ Գավուքճեանի յիշատակին:

Մնացեալ պարտքի գումարն է 750,000 --եօթը հարիւր յիսուն-- հազար տուար, որուն դիմաց դրամատան մէջ ունինք միայն 150,000 --հարիւր յիսուն հազար-- տուար՝ որ մէկ տարուան վճարումն է:

Սոյն նպատակին կարեւորութիւնը նկատի ունենալով կը յանձնարարենք.


1. Հոգեհանգստեան Պաշտօն կատարել մեր թեմի եկեղեցիներուն մէջ Հայկ Գավուքճեանի հոգևոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ, Յունիս 5էն մինչեւ Յունիս 26, ըստ յարմարութեան:

2. Կազմել տեղական յանձնախումբ մը հետապնդելու համար առաջադրուած նպատակը: Յանձնախումբի անդամներուն անունները հաճեցէք մեզի դրկել մինչեւ Յունիս 16: Եթէ փափաքին, համայնքներ կրնան քառասունքի Հոգեհանգիստէն յետոյ մատաղի ճաշ հրամցնել ներկաներուն, եւ այդ առիթով բացատրել նպատակը եւ ծրագիրը կազմուած յանձնախումբին: Նուէրները պէտք է Առաջնորդարան դրկուին նուիրատուներու հասցէներով:

3. Ձեր համայնքին մէջ հաճեցէք զանել 80 անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը փափաքի 102-ական տուար նուիրել Հայկ Գավուքճեանի յիշատակին, Ս. Վարդան Մայր Ծածարի պարտուց բարձման համար:

Լիայոյս ենք որ Կեդրոնական Գործադիր Մարմնի այս սկզբնական աշխատանքներուն սատար հանդիսանալու համար, մեր հոգեւոր հովիւներն ու ծխական խորհուրդները բարենախանձութեամբ պիտի կատարեն յիշեալ ոգեկոչումները եւ պիտի անպայման արդիւնաւորեն նուիրահաւաքման գործը: Այսպէսով լաւագոյնս արտայայտած պիտի ըլլանք մեր սէրը ``Համայնքի նահապետ`` պատուանունով ճանչցուած Հայկ Գավուքճեանին, որուն հոգին երկնային լոյսերու մէջէն կը հետեւի մեր համադրեալ ջանքերուն:

Սիրոյ ողջունիւ



ԹՈՐԳՈՍ ԱՐԵԵՊՈՍԿՈՒՍՍ

Առաջնորդ

Քիւ 25296
Մայիս 31, 1977

Մեծայարգ
Տիար Յարութ Գարագաշեան
Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
ժխական Խորհուրդի Աճեցակետ
Ելզբրոն.

Յարգելի Տիար Գարագաշեան,

Ձեր ներկայեցողութեան շնորհիւ շնորհակալութեամբ յայտնում եմ Ձեր 1977 թ. մայիսի 28-ին ձեր նամակին:

Համեմատելով Ձեր ներկայացրած արդարացի դիտողութիւնը եւ ընթացք առնելու եղանակը:

Այցելու հոգեւորականներու որոնելիք փոփոխութեան Խորհուրդի գանձապահին կողմէ պէտք է նախապէս դատարարութեամբ ըլլան եւ նոյն օրն իսկ յանձնուին անոնց:

Ձեր յուսանք որ այսուհետեւ նման հարցերու մասին որեւէ գանձապահ տո՞ր չի տրուիր:

Մերոյ ողջունելի

ՅԱՐԱՅ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
Առաջնորդ